

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտ**

<i>Ծրագրի անվանումը</i>	«Մոնիտորինգի իրականացում Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝ պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող դեղորայքի, բուժ. պարագաների և բժշկական սարքերի /այսուհետ՝ բժշկական ապրանքների/, ինչպես նաև պետության կողմից հատկացված գումարներով գնված բժշկական ապրանքների ձեռք բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ»:
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Անանիա Մադաթյան, հեռ. 095 06 21 12; էլ. փոստ anania-2011@mail.ru
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	Երևան համայնք
<i>Ծրագրի տևողությունը</i>	60 օր
<i>Ծրագրի հակիրճ նկարագիրը</i>	Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝ պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող բժշկական ապրանքների, ինչպես նաև պետության կողմից հատկացված գումարներով գնված բժշկական ապրանքների ձեռք բերման համապատասխանությունը գնումների մասին օրենսդրության պահանջներին և հիվանդներին դրանց հատկացման օրինականությունը և այդ գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը:
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	1 135 000 ՀՀ դրամ
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	

Դիմող կազմակերպության/անների նկարագրություն

1. «Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն հասարակական կազմակերպությունը (*այսուհետ՝ ՀԿ*) հիմնադրվել է 2011թ. մարտ ամսին: 2012թ.-ից ՔՀՖ-ի ԱլԳ Հայաստանի ազգային պլատֆորմի (*այսուհետ՝ ՀԱՊ*) անդամ է: 2014թ.-ից հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ է: 2012-2014թթ.-ին որպես դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություն գրանցվել է ԿԸՀ-ում և դիտորդական առաքելություն է իրականացրել 2012թ. ՀՀ Ազգային Ժողովի, 2013թ. Նախագահական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ: Այդ գործընթացների ընթացքում ՀԿ-ն մի շարք բացահայտումներ է արել, որոնք ուղեկցվել են կաշառքի և կոռուպցիայի տարրեր պարունակող գործողություններով: Առհասարակ, կազմակերպությունը այլ ՔՀԿ-ների հետ միասին մի շարք անգամներ մասնակցել է տարբեր ուսումնասիրությունների՝ կոռուպցիոն ռիսկերի բացահատման ուղղությամբ: ՀԿ-ն ակտիվ դերակատարություն է ունեցել ՔՀՖ-ի ԱլԳ ՀԱՊ-ի կողմից արված բազմաթիվ հայտարարությունների և հրապարակումների իրականացման աշխատանքներին: Այդ ուսումնասիրությունների արդյունքում կազմակերպության անունից մի շարք հրապարակումներ են լույս տեսել հանրապետական մամուլում, մասնավորապես՝ «Առավոտ», «Հրապարակ», «Ժողովուրդ» թերթերում և

կայքերում ու ՔՀՖ-ի ԱլԳ ՀԱՊ կողմից արված մի շարք հայտարարություններում՝ ուղղակիորեն և անուղղակիորեն արձարծելով կոռուպցիայի, կաշառակերության և նմանատիպ այլ երևույթների հետ կապված տարաբնույթ հարցեր: Կազմակերպությունը ակտիվ մասնակցություն է ունեցել ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների կողմից կազմակերպված, հասարակական լայն հնչեղություն ունեցող բազմապիսի ակցիաների: 2014թ. կազմակերպությունը ՔՀՖ-ի ԱլԳ ՀԱՊ կազմակերպությունների շրջանակներում իրականացրել է <<Հայաստան՝ Եվրամիություն, թե՛ ԵՏՄ>> հետազոտական ծրագիրը, որի արդյունքները հրապարակվել են: 2014թ. նոյեմբերին մասնակցել է Բաթումիում կայացած ՔՀՖ-ի ԱլԳ հերթական համաժողովի աշխատանքներին: 2015թ. Բրյուսելում մասնակցել է ԱլԳ ՔՀՖ-ի առաջին աշխատանքային խմբի կողմից կազմակերպված աշխատանքային նիստերին, որտեղ ներկայացրել է ՀԿ-ի կողմից մշակված մի շարք առաջարկություններ, որոնց մի մասը վերաբերվել է տարբեր բնագավառներում հակակոռուպցիոն գործընթացներին, որոնք տեղ են գտել աշխատանքային խմբի հետագա ծրագրերում: Տարբեր ժամանակներում, մի շարք անգամներ իրականացրել է նախընտրական, ընտրական և հետընտրական գործընթացների հետ կապված սոցիոլոգիական հետազոտություններ և հարցումներ՝ փորձելով ընտրողներից ճշտել այդ գործընթացներում առկա կոռուպցիոն առաջարկությունները և ռիսկերը:

ՀԿ-ն հանդիսանում է հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ: Կազմակերպության նախագահը հանդիսանում է ՀՀ կառավարություն-ռազմավարական ծրագրերի քաղաքացիական համագործակցության ցանց (ՌԾ ՔՀՑ) գործընկերության համակարգող խորհրդի անդամ, ՌԾ ՔՀՑ-ի <<Մարդու իրավունքների պաշտպանության>> ոլորտային խմբի համակարգողը:

Ծրագրի նկարագրություն

Երևան քաղաքի պոլիկլինիկաները և այլ բժշկական հաստատությունները պարբերաբար ՀՀ առողջապահության նախարարության <<Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն>> ՊՈԱԿ-ից՝ նախարարության բաշխացուցակներով անվճար ստանում են պետության կողմից գնված բժշկական ապրանքներ, ինչպես նաև, ըստ իրենց ներկայացրած գրությունների, նախարարության հրահանգով, նույն կազմակերպությունից անվճար ստանում են պետության կողմից հումանիտար ճանապարհով ստացված նմանատիպ բժշկական ապրանքներ՝ իրենց կողմից սպասարկվող բնակչությանը դեղորայքով, բուժ. պարագաներով և բժշկական սարքերով ապահովելու համար: Նախատեսվում է այցելել նշված պոլիկլինիկաները, ուսումնասիրել վերջին երկու տարվա ընթացքում ստացված հումանիտար, պետության կողմից հատկացված և բուժհաստատությունների կողմից գնված բժշկական ապրանքները՝ ըստ հաշիվ-ապրանքագրերի, դրանց մուտքագրումը պոլիկլինիկաների պահեստ և բաշխման շարժը՝ պոլիկլինիկաների ստորաբաժանումներ, որտեղից նաև իրականացված բաշխումները հիվանդներին: Ձուգահեռաբար, պետք է ուսումնասիրվի պետության կողմից հատկացված գումարներով կատարված գնումների համապատասխանությունը գնումների մասին օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ուսումնասիրության իրականացում՝ բժշկական ապրանքների ձեռք բերումից մինչև հիվանդներին բաշխումն ընկած միջակայքում փաստաթղթային ձևակերպումների և փաստացի բաշխումների համապատասխանությունը: Այս գործընթացները հղի են բազմապիսի կոռուպցիոն ռիսկերով՝ դեղորայքի դուրս գրում և դրանց ամբողջական քանակից մասնակի տրամադրում հիվանդներին, այդ դեղորայքի չհատկացված խմբաքանակի տեղափոխում տվյալ բուժհաստատության կամ այլ դեղատներ՝ վաճառքի համար և այսպես շարունակ: Այս հարցերի պատասխանները պետք է վեր հանվեն հիվանդներին ուղղված տարաբնույթ և խաչաձև հարցերի միջոցով:

Խնդրի համառոտ վերլուծությունը

1-ին քայլով, ընտրանքային կարգով նախ պետք է ուսումնասիրել հաշվառված հիվանդների փաստացի բնակության վայրի հիմնավորումները: Պետք է պոլիկլինիկաներում նախ ուսումնասիրել հիվանդների քարտերը, բժշկի կողմից կատարված հետազոտությունները և բժշկական ախտորոշումների ձևակերպումները: Այդ ախտորոշումների հիման վրա բժշկի կողմից կատարված դեղորայքային նշանակումները, որից պարզ կդառնա, թե տվյալ պահին պոլիկլինիկայում առկա դեղորայքից ինչ նշանակումներ է կատարվել, ինչ անվանումներով և ինչ քանակի դեղորայք է դուրս գրվել ամեն հիվանդի համար և որքանով են դրանք համապատասխանում հիվանդի կողմից ստորագրված ու ստացված դեղորայքի անվանումների և քանակների հետ: Պետք է մեծ ուշադրություն դարձնել բժշկական ապրանքների՝ դեղորայքի, բուժ պարագաների դուրս գրումների՝ նշանակումների նորմատիվային համապատասխանությունը ախտորոշված հիվանդություններին: Ուշադիր պետք է գննել այն բժշկական ապրանքների ցանկը, որոնք տվյալ պահին առկա են եղել պոլիկլինիկայում, սակայն բժիշկն այն նշանակել է ոչ թե անվճար ստանալու պոլիկլինիկայից, այլ հիվանդն այն ձեռք է բերել այլ դեղատներից: Նաև մեծ ուշադրություն պետք է դարձնել այն դեպքերին, երբ հիվանդի համար նշանակվել է մի շարք անվանումներով և որոշակի քանակներով դեղորայք, սակայն հիվանդը այդ ամենի դիմաց ստորագրել է, սակայն ստացել է ոչ ամբողջական, այլ ստացել է մասնակիորեն: Նման մոտեցմամբ հնարավոր է հստակորեն վերահսկել վերջին երկու տարիներին հումանիտար ճանապարհով ստացված և գնված բժշկական ապրանքների քանակական շարժը՝ դրանց ստացումից ու գնումից՝ մինչև դրանց բաշխման օրինականությունը:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է ուսումնասիրել հումանիտար ճանապարհով ստացվող, պետական միջոցներով գնվող և պետության կողմից հատկացվող բժշկական ապրանքների՝ դեղորայքի, բուժպարագաների՝ հիվանդներին հատկացման թափանցիկությունը, արդարացիությունը և դրանցում առկա կոռուպցիոն ռիսկերի վեր հանումը: Նմանատիպ տեղեկատվության հրապարակումը նաև խթան կհանդիսանա պոլիկլինիկաների և այլ բուժհաստատությունների համար ավելի պատասխանատու, ազնիվ, թափանցիկ աշխատելու համար, քանզի հետագայում նման հրապարակումները բացի բարոյականից, կունենան նաև իրավական հետևանքներ: Չափազանց կարևոր է, որ հատկապես այսօրվա ծանր սոցիալ-տնտեսական և բնակչության աղքատության պայմաններում ավելի քան կարևոր է, որպեսզի հիվանդները առավելագույնս օգտվեն պետության կողմից անվճար հատկացվող բժշկական ապրանքներից: Նմանատիպ ուսումնասիրությունները կդառնան որպես ուսանելիփորձ և զսպող հանգրվաններ, որպեսզի ոչ միայն առողջապահության, այլ նաև բազմաթիվ այլ ոլորտներում իրականացվեն նմանատիպ ուսումնասիրություններ՝ բացահայտելու կոռուպցիոն ռիսկերը և տեղեկատվություն տրամադրելու պատկան մարմիններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Ծրագրի շահառուները

Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները Երևան քաղաքի բազմապիսի հիվանդություններով տառապող բնակիչներն են: Դրանց թիվը չափազանց մեծ է և դրանք հիմնականում պատկանում են բնակչության աղքատ և չափազանց աղքատ շերտերին, որոնք պարտադիր պետք է օգտվեն պոլիկլինիկական անվճար դեղորայքային և այլ ծառայություններից: Ի վերջո, պետության կողմից այդ ծախսվող գումարները բյուջեի գումարներ են, որոնք ձևավորվել են նաև նույն հիվանդ քաղաքացիների կողմից կատարած հարկային վճարումներից:

Կիրառվող մեթոդաբանությունը

Պոլիկլինիկաներում բժշկական ապրանքների ստացման և բաշխման փաստաթղթային ու փաստացի ուսումնասիրության և հիվանդների կողմից ստացված դեղորայքի և այլ բժշկական ապրանքների համապատասխանության ստուգումը, ինչպես նաև ընտրանքային հեռախոսազանգերի միջոցով հիվանդներից ճշտումները՝ նրանց կողմից փաստացի ստացված բժշկական ապրանքների անվանական և քանակական համապատասխանությունը հիվանդության քարտերում նշված տեղեկատվությանը: Ընտրանքային կարգով կուսումնասիրվի նաև բուժհաստատությունների կողմից պետական գնումների ընթացակարգերի համապատասխանությունը գնումների մասին օրենսդրությանը:

Ակնկալվող արդյունքները և ազդեցությունը

Այս մոնիտորինգի արդյունքում հստակորեն կարտացոլվի պետական միջոցներով գնվող և պետության կողմից հատկացվող բժշկական ապրանքների՝ բնակչությանը հասանելիության պատկերը, գնումների ընթացքում գնումների մասին օրենսդրության կիրառման օրինականությունը, արդյունքում նաև՝ կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Կոռուպցիոն ռիսկերի առկայության պարագայում, համապատասխան տեղեկատվությունը կտրամադրվի վերադաս և իրավապահ մարմիններին:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Այցելություն մեկ պոլիկլինիկա
2-րդ	Այցելություն մեկ պոլիկլինիկա
3-րդ	Այցելություն մեկ պոլիկլինիկա
4-րդ	Այցելություն մեկ պոլիկլինիկա
5-րդ	Այցելություն 2-րդ պոլիկլինիկա
6-րդ	Այցելություն 2-րդ պոլիկլինիկա
7-րդ	Այցելություն 2-րդ պոլիկլինիկա
8-րդ	Այցելություն 2-րդ պոլիկլինիկա

Սույն ծրագիրը այլ կազմակերպության չի ներկայացվել:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկ

1. ՔՀԿ (ների) և ՋԼՄ-ների կանոնադրության պատճենը.
2. ՔՀԿ (ների) և ՋԼՄ-ների պետական գրանցման վկայականի պատճենը՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
3. ԻՀԱ կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենը.
4. հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.
5. բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն (հաղթող ճանաչված հայտատուները պետք է ներկայացնել նաև քաղվածք բանկից).
6. ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները,
7. Պարտավորագիր-նամակներ՝ համատեղ ներկայացվելիք ծրագրերի դեպքում: